ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

ք. Գավառ Ազատության 21
Հեռ.026423353 էլ.հասցեն gavaribk@mail.ru

07 - 281
30.04.2024թ

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Պարոն Ա. Ավանեսյանին

Որոշում
Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք
չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

Հարգելի պարոն Ա. Ավանեսյան

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ի հետ <<Լինարե մեդ>> ՍՊԸ-ի հետ (այսուհետ Վաճառող) լաբորատոր նյութերի ձեռք բերման համար 23.02.2024թ կնքվել է ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/8-8 ծածկագրով պայմանագիրը, բժշկական պարագաների ձեռք բերման համար 11.03.2024թ կնքվել է ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/9-12 ծածկագրով և 14.03.2024թ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/10-10 ծածկագրերով պայմանագրերը: Համաձայն կնքված պայմանագրերի 8.3 կետի, այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

ՀՀ պետական վերահսկողական ծառայության 10.04.2024թ N6/844-24 գրության համաձայն /կցվում է/ <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն լուծարել է վերոնշյալ պայմանագրերը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ

AnyScanner

հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:
Ընդ որում, եթե՝
- լիազորված մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարել է պայմանագրի որակավորման և կատարման ապահովման գումարները <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ի բանկային հաշվեհամարին, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայկացնում լիազորված մարմնին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որոկավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումն ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագրի կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Կից ներկայացնում ենք ՀՀ պետական վերահսկողության ծառայության կողմից ներկայացրած գրությունը և առդիր 6 /վեց/ նիշք:

Ելնելով վերոգրյալից Գավառի ԲԿ ՓԲԸ-ն ներկայացնում է <<Լինարե մեդ >> ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ համապատասխան որոշումը և պահանջվող տեղեկատվությունը:

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգերի ծածկագրերը
			Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<Լինարե մեդ>> ՍՊԸ	01063047	ք. Երևան Նանսենի 7/43		Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդված		29.04.2024թ., ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/8, ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/9, ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/10

Հարգանքով

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ տնօրեն՝ Գ. Սողոմոնյան

AnyScanner